

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

15 հոկտեմբերի 2020 թ.

N 528-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պաշտպանության մասին» օրենքի 14.1-ին հոդվածի 11-րդ մասով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել աշխարհազորայինների հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ անմիջապես:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____
ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղ. (գյուղ) _____

«___» _____ 20__թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ԱՇ _____ (զինկոմիսարիատը կամ համայնքը), ի դեմս
_____ -ի, (այսուհետ՝ հավաքագրող), մի կողմից,
(պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը)

և _____-ը (այսուհետ՝ աշխարհագրային (այսուհետ նաև՝ կողմեր),
(անունը, հայրանունը, ազգանունը)

մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրն առ այն, որ աշխարհագրայինը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված պայմաններով կամավոր ծառայության անցնել «Պաշտպանության մասին» օրենքով նախատեսված՝ աշխարհագրի համակարգում (այսուհետ՝ ծառայություն):

2. ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆԻ ԿՈՂՄԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Աշխարհագրայինի կողմից սույն պայմանագիրը կնքելուց հետո նրա տվյալները ներկայացվում են աշխարհագրային շտաբ:

2.2. Աշխարհագրային շտաբի ղեկավարի կողմից աշխարհագրայինը նշանակվում է համապատասխան պաշտոնի:

2.3. Պաշտոնի նշանակվելուց հետո աշխարհագրայինը պարտավոր է ծառայության ընթացքում կատարել աշխարհագրայինի կարգավիճակից բխող իր պարտականությունները, խստորեն ղեկավարվել ծառայությունը կանոնակարգող ակտերի պահանջներով և պետերի հրամաններով:

2.4. Աշխարհագրայինի դրամական ապահովության, արտոնությունների և սոցիալական երաշխիքների հետ կապված հարցերը կարգավորվում են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելու օրվանից և գործում է անժամկետ:

3.2. Պայմանագիրը կարող է լուծվել աշխարհագրայինի նախաձեռնությամբ կամ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

3.3. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ: Պայմանագրի մեկ օրինակը տրվում է աշխարհագրայինին, իսկ մյուս օրինակը պահվում է աշխարհագրային շտաբում:

4. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆ

ՀԱՎԱՔԱԳՐՈՂ

_____ (բնակության վայրը)

_____ (գտնվելու վայրը)

_____ (անվան սկզբնատառը, ազգանունը, անձը հաստատող փաստաթուղթ)

_____ (պաշտոնատար անձի կոչումը, անվան սկզբնատառը, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 20 թ.

_____ 20 թ.

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԱԶԱՐՅԱՆ